

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018
9-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով:

Նա արդեն ավարտել էր յուր այսօրվա պարապմունքը: Տապարը դրեց ցած, անքթիթ զննեց փորվածքի խորությունը և ապա վերառեց վերարկուն , ձգեց ուսերին և տարտամ քայլերով դիմեց դեպի կղզու գառիվայրը: Նեղ շավիղ էր, որ կազմվել էր այդ միակ մարդու ոտքի հետքերից: Անցնում էր թփերի ու մացառների միջով և ոլորվելով տամուկ, մամռապատ ապառաժների վրայով՝ կորչում էր ստվերախիտ ծմակի մեջ: Երբեմն դժնիկը յուր տատասկներով մագլցում էր նրա վերարկուից, հինավուրց կաղնին յուր անհարթ տերևներով զարկվում էր նրա փառահեղ դեմքին: Նա մերձեցավ մի քարանձավի, բազմեցավ թարմ ոստերից հյուսված մի նստարանի և մտահոգ դեմքը դարձրեց դեպի հանգչող արեգակը: Անողոք օվկիանոսը անանցանելի պատնեշ էր դրել նրա շուրջը: Կար ժամանակ, որ նա մի արքունիքի զարդն էր: Ինքը արքայի հոր քեռորդին էր և նրա սենեկապետը: Ոսկեհուռ զգեստներով, գոհարազարդ կամարը մեջքին, ոսկեպատյան սուրը ձեռքում՝ միշտ կանգնած էր լինում արքայի սնարքում: Մոր կողմից թագավորագն էր, իսկ հոր կողմից մեծ քահանայապետի թոռն էր: Այդ մարդը Ներսես Մեծն էր: Հիշենք հետևյալ թևավոր խոսքը. «Տաշտը դելֆինի համար փոքր է»:

- 1.Տեքստից դո՛ւրս գրեք տրված բառակազմական կաղապարներով մեկական բաղադրյալ բառ՝ արմատ+արմատ+ածանց, ածանց+արմատ+ածանց+ածանց, արմատ+ածանց+արմատ, արմատ+հոդակապ+արմատ: (2 միավոր)
 - 2.**Անքթիթ, տարտամ, շավիղ, տամուկ** բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ: (2 միավոր)
 3. Տեքստում որո՞նք են **ընձյուղ, սալ, թաց, բիրտ, պատվար** բառերի հոմանիշները: (2 միավոր)
 - 4.Գրե՛ք **քեռորդի** բառի բացատրությունը:Նշե՛ք՝ ընդգծված բառի առաջին արմատը որ բառի գրաբարյան ո՞ր հոլովածնն է: (2 միավոր)
 5. Նշե՛ք՝ ինչ է խորհրդանշում **կաղնի** ծառը: Գրե՛ք **կաղնի** ծառին վերաբերող շրջասությունը: (2 միավոր)
 - 6.Որտեղի՞ց է ծագում «Տաշտը դելֆինի համար փոքր է» թևավոր խոսքը , և երբ է այն կիրառվում: (3 միավոր)
 7. Տեքստից դո՛ւրս գրեք գրաբարյան քերականական ձևերը: (1 միավոր)
 - 8.**Ներսես Մեծ** բաղադրյալ հատուկ անվան նմանողությամբ գրե՛ք ածական պարունակող չորս բաղադրյալ անձնանուն: (1 միավոր)
- Բ. Շարադրություն՝ «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» վերնագրով (երկու էջի սահմաններում):** (5 միավոր)